

**FELIX CORLEY, ARMENIA AND KARABAKH:
ANCIENT FAITH, MODERN WAR, CATHOLIC
TRUTH SOCIETY PUBLICATIONS, LONDON,
1992, ii + 22 PAGES.**

Ա. ՍԱՆՃԵԱՆ

Գրախօսուող աշխատութիւնը չի յաւակնիր ակադեմական ուսումնասիրութիւն մը ըլլալ: Անիկա շատ աւելի մասնագէտի մը կողմէ գրի առնուած ճամբու նօթերու տպաւորութիւն կը թողու: Այսուհանդերձ, եւ հակառակ իր փոքր ծաւալին, այնտեղ բարձրացուած շարք մը հարցեր արժանի են մասնագէտներու ուշադրութեան, մանաւանդ երբ Հայաստանեայց Եկեղեցին եւ նորանկախ Հայաստանի կառավարութիւնը կը պատրաստուին 2001 թուականին փառահեղօրէն նշել քրիստոնէութեան Հայաստանի պետական կրօն հռչակուելուն 1700-ամեակը:

Ֆելիքս Քորլին Արեւելեան Եւրոպայի քրիստոնէական եկեղեցիներու գծով երիտասարդ մասնագէտ մըն է: Վերջին տարիներուն յաճախ այցելած է Հայաստան, Արցախ եւ Անդրկովկասի այլ շրջաններ: Եկեղեցական հարցերով թէ դարաբաղեան հակամարտութեան կապակցութեամբ՝ անիկա յաճախ հանդէս կու գայ բրիտանական մամուլին մէջ:

Փոքրածաւալ 22 էջերու մէջ, Քորլին արագ ակնարկ մը կը նետէ հայ ժողովուրդի եւ մասնաւորապէս Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութեան վրայ՝ 301 թուականէն սկսելով: Համեմատաբար աւելի մանրամասն կ'անդրադառնայ ԺԹ՝ դարու վերջաւորութեան արեւմտահայութեան ազգային-ազատագրական պայքարին եւ 1915 թուականի ցեղասպանութեան: Իր համառօտ աշխատութեան մէջ, Քորլին անտես չ'ըներ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնն ու Հայ Կաթողիկէ Համայնքը:

Քորլին երկարօրէն կը կեդրոնանայ Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութեան խորհրդային ժամանակահատուածին վրայ: Անիկա կ'ընդգծէ, թէ խորհրդային իշխանութիւնը Հայաստանեայց Եկեղեցին դուրսէն ջախջախելու մի քանի անյաջող փորձ կատարելէ ետք՝ 1920-ական թուականներու կէսէն սկսեալ սկսաւ ներթափանցել եկեղեցական բոլոր մակարդակի կառօյցներէն ներս եւ յետագային կա-

րողացաւ իրեն ենթարկել զայն: Խորհրդային կառավարութիւնը քաջ
կը գիտակցէր, որ հայ ժողովուրդի աշխարհով մէկ սփռուած ըլլալուն
պատճառով, Հայաստանեայց Եկեղեցին կրնար կարեւոր դեր խաղալ
իրրեւ քարոզչական մեքենայ: Իր հերթին, գիտակցելով որ իր վայե-
լած համեմատական ազատութիւնը պայմանաւորուած է խորհրդային
իշխանութեան հանդէպ իր «հաւատարիմ» կեցուածքով, Եկեղեցին եր-
բեք չէ քաջալերած Հայաստանի մէջ գործունէութիւն ծաւալած քաղա-
քական այլախոհական շարժումները: Այս բաժնին մէջ, հեղինակը ի-
րաւամբ կը մատնանչէ, թէ 1988 թուականին, Արցախեան պահանջա-
տիրական շարժման սկզբնական օրերուն, Կաթողիկոսին շարունակ-
ուող խորհրդամէտ դիրքորոշումը պատճառ դարձաւ, որ ան իսկապէս
դիմագրաւէր ժողովրդային զանգուածներէն մեկուսանալու վտանգ
մը:

Քորլին կ'ընդգծէ, թէ Հայաստանեայց Եկեղեցին պատմականօ-
րէն կարեւոր դեր ունեցած է հայութեան ազգային ոգին կենսունակ
պահելու մէջ, բայց միաժամանակ տուժած է ազգին նկատմամբ իր
չափազանց մօտիկութենէն: Հեղինակը կը շեշտէ, որ Հայաստանեայց
Եկեղեցին ազգային հաստատութիւն մըն է եւ թէ անիկա միշտ մեր-
ժած է ամէն տեսակի հաւատափոխութեան միտող արարքները: Հա-
յութեան մօտ, «եկեղեցի» եւ «ազգ» հասկացողութիւնները համար-
եա՛նոյնացած են: Գրեթէ իւրաքանչիւր հայու բնակարանին մէջ կա-
րելի է կախուած գտնել Ամենայն Հայոց Կաթողիկոսին լուսանկարը,
բայց այս երեւոյթը կարելի է չա՛տ աւելի իրրեւ ազգային պատկանե-
լիութեան արտայայտութիւն մեկնաբանել քան թէ՛ խոր հաւատքի:
Վկայակոչելով ուրա լրագրող Եուրի Ռոսթը՝ Քորլին կ'ընդգծէ, որ
հայութեան համար կրօնական հաւատքը զարծած է աւելի ու աւելի ձե-
ւական մասունք մը, Եկեղեցուոյ հանդէպ հաւատարմութիւնը՝ ազգա-
յին սովորոյթ մը, առանց խոր հաւատքի: Ան ներկայ աննախանձելի
դրութեան արմատները կը փորձէ փնտռել եօթնասունամեայ խոր-
հրդային ամբողջատիրութեան մէջ: Ըստ իս՝ զայն պէտք է տանիլ
դէպի աւելի խորերը: Ազգային պատկանելիութեան ու ազգային ե-
կեղեցուոյ միջեւ սահմանագծի գրեթէ չգոյութիւնը բնորոշ է նաեւ
չարք մը այլ արեւելեան ուղղափառ ժողովուրդ-եկեղեցիներու: Կրնայ
ըլլալ որ անիկա քիչ մը աւելի շեշտուած է հայութեան մօտ: Այնու-
ամենայնիւ՝ այս ուղղութեամբ արեւելեան եւ արեւմտեան քրիստոնե-
այ եկեղեցիներու միջեւ ըմբռնումներու ու սովորոյթներու տար-
բերութիւնը ակներեւ է: Ֆիլիքս Քորլին առաջին մասնագէտը չէ, որ
կը շեշտէ այս իւրայատկութիւնը: Անոր ներքին ծալքերը վեր հանե-
լու անհրաժեշտ պարտականութիւնը կը մնայ սակայն այս հարցով
հետաքրքրուող աստուածաբաններուն ու ընկերաբաններուն:

Քորլին կ'անդրադառնայ 1988-ին սկիզբ առած արցախեան պայքարին եւ նոյն թուականին տեղի ունեցած կործանարար երկրաշարժին: Նշելով հանդերձ, որ ե'ւ հայերը ե'ւ ատրպէյճանցիները քացարձակօրէն կը մերժեն այս հակամարտութեան կրօնական բնոյթ վերագրել, Քորլին կ'ըսէ թէ Ղարաբաղի հայ բնակչութեան մօտ առկայ է պատերազմը ընդունիլ, զո'նէ մասնակիօրէն, իբրեւ խաւաքրիստոնեայ առճակատում: Իբրեւ օրինակ, ան կը յիշատակէ թէ պատերազմի սկիզբը ատրպէյճանցիներուն օժանդակող ոուս զինուորները արցախահայութեան կողմէ կը մեղադրուէին իբրեւ «հաւատուրացներ» ու «մահմետականներ»:

Քորլին կը պատմէ 1988-էն ետք Հայաստանի եւ Արցախի մէջ կրօնական մասնակի վերագարթօնքին եւ եկեղեցիներու ու վանքերու վերաբացման մասին: Ան յոյս կը յայտնէ, որ հասարակութեան մէջ Հայաստանեայց Եկեղեցուոյ դերը հետզհետէ պիտի զօրանայ՝ մանաւանդ երբ բնակչութիւնը հիասթափի իրարու հետ անընդհատ զրգուրտող քաղաքական կուսակցութիւններէն: Վկայակոչելով Մոսկուայի Հայոց Առաջնորդ Տիրան Եպս. Կիւրեղեանի այն խօսքը թէ «հայերը 600 տարի խաղաղ ապրեցան Առաքելական Եկեղեցուոյ իշխանութեան տակ: Մեր ազգային աղէտը սկիզբ առաւ քաղաքական կուսակցութիւններու վերելքով», Քորլին կ'ըսէ թէ որոշ հայեր կը նախընտրեն կղերապետական սիստեմի կառավարութեան մը վերահաստատումը: Հեղինակի վերջին պնդումը, ըստ իս, չափազանցուած է եւ հիմնուած՝ խիստ պարագայական եզակի միտքի մը վրայ:

Քորլիի փոքրածաւալ աշխատութիւնը շատ հետաքրքրական է, ընթերցելու եւ բազմիցս խորհելու համար առատ նիւթ կը հայթայթէ: Յուսանք որ այնտեղ բարձրացուած վիճայարոյց միտքերէն շատերը մինչեւ 2001 թուականը քննարկման առարկայ կը դառնան մասնագէտներու կողմէ՝ առ ի նախապատրաստութիւն 1700-ամեակի տօնակատարութեանց: Յորելեանը պէտք է դառնայ ո'չ միայն տօնակատարութեան եւ ինքնաշնորհաւորման առիթ մը՝ այլեւ եկեղեցի-ժողովուրդ-նորանկախ պետութիւն փոխադարձ կապերու վերաբեւորման ու յստակացման շարժառիթ մը:

ԱՐԱ ՍԱՆՃԵԱՆ